

# «ԹԻՍ ՄԻՍԹԵՄՍ»

*ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025թ.


ԵՐԵՎԱՆ 2026



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |    |
|--|----|
| ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ   | 3  |
| ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ   | 6  |
| ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ | 7  |
| ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ                       | 8  |
| ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ                                | 9  |
| ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ                          | 10 |

18.05.2026թ.  
N 032611



## ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԹԻՍ ՄԻՍԹԵՄՍ» ՓԲԸ բաժնետիրոջը

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԹԻՍ ՄԻՍԹԵՄՍ» ՓԲԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

### Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՍՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրատարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԽ կանոնագրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

***Ղեկավարության և կատարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար***

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

***Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար***


Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք արդյոք առկա է ղեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:



Սեդրակ Բադալյան

Աուդիտոր

18 մայիսի 2026թ.


## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| Հազար դրամ  |        | 2025թ.<br>դեկտեմբերի<br>31-ի<br>դրությամբ | 2024թ.<br>դեկտեմբերի<br>31-ի<br>դրությամբ |
|---|--------|---|---|
|   | Ծանոթ. |   |   |
| <b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>                                       |        |   |   |
| <i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>                            |        |   |   |
| Հիմնական միջոցներ                                     | 4      | 732,449                                   | 746,095                                   |
| Ոչ նյութական ակտիվներ                                 |        | 6,551                                     | 6,069                                     |
| Հետաձգված հարկային ակտիվներ                           | 5      | 4,838                                     | 3,693                                     |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար    |        | 200                                       | 200                                       |
|   |        | <u>744,038</u>                            | <u>756,057</u>                            |
| <i>Ընթացիկ ակտիվներ</i>                               |        |   |   |
| Պաշարներ  | 6      | 1,833,887                                 | 810,450                                   |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր                   | 7      | 2,930,804                                 | 2,558,668                                 |
| Շահութահարկի գծով դեբիտորական պարտքեր                 |        | 2,503                                     | -   |
| Տրված փոխառություններ                                 |        | 13,625                                    | -   |
| Մնացորդներ բանկերում                                  | 8      | 775,786                                   | 133,194                                   |
|   |        | <u>5,556,605</u>                          | <u>3,502,312</u>                          |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ</b>                              |        | <u>6,300,643</u>                          | <u>4,258,369</u>                          |
| <b>ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>          |        |   |   |
| <i>Կապիտալ և պահուստներ</i>                           | 9      |   |   |
| Բաժնետիրական կապիտալ                                  |        | 100                                       | 100                                       |
| Կուտակված շահույթ                                     |        | 1,018,914                                 | 1,000,798                                 |
|   |        | <u>1,019,014</u>                          | <u>1,000,898</u>                          |
| <i>Երկարաժամկետ պարտավորություններ</i>                |        |   |   |
| Վարկեր և փոխառություններ                              | 10     | 1,257,764                                 | 77,404                                    |
|   |        | <u>1,257,764</u>                          | <u>77,404</u>                             |
| <i>Կարճաժամկետ պարտավորություններ</i>                 |        |   |   |
| Վարկեր և փոխառություններ                              | 10     | 52,615                                    | 69,442                                    |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր                  | 11     | 3,971,250                                 | 3,038,724                                 |
| Շահութահարկի գծով պարտավորություն                     |        | -   | 71,901                                    |
|   |        | <u>4,023,865</u>                          | <u>3,180,067</u>                          |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> |        | <u>6,300,643</u>                          | <u>4,258,369</u>                          |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. մայիսի 18-ին:

Նելլի Մալյան

Տնօրեն



Արամայիս Կանդայան

Գլխ. հաշվապահ

1-25 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՐԱՄԱՆԵԼԻ ՄԱՍԸ

## ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| Հազար դրամ                                    |               | 2025թ.<br>դեկտեմբերի<br>31-ին<br>ավարտված<br>տարի | 2024թ.<br>դեկտեմբերի<br>31-ին<br>ավարտված<br>տարի |
|---|---------------|---|---|
|   | <u>Ծանոթ.</u> |   |   |
| Հասույթ                                       | 12            | 3,893,264   | 6,635,555   |
| Վաճառքի ինքնարժեք                             | 13            | (3,155,948)                                       | (5,784,419)                                       |
| Համախառն շահույթ                              |               | <u>737,316</u>                                    | <u>851,136</u>                                    |
| Այլ եկամուտ                                   |               | 21,799  | 11,514  |
| Իրացման ծախսեր                                | 14            | (153,028)   | (101,996)   |
| Վարչական ծախսեր                               | 15            | (161,646)   | (137,980)   |
| Այլ ծախսեր                                    | 16            | (77,615)  | (7,325)   |
| Գործառնական գործունեությունից շահույթ         |               | <u>366,826</u>                                    | <u>615,349</u>                                    |
| Ֆինանսական եկամուտ/(ծախսեր), զուտ             |               | (82,734)  | (9,079)   |
| Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)     |               | 41,367  | (11,325)  |
| Շահույթ մինչև հարկերը                         |               | <u>325,459</u>                                    | <u>594,945</u>                                    |
| Շահութահարկի գծով ծախս                        | 17            | (57,343)  | (115,567)   |
| Տարվա շահույթ                                 |               | <u>268,116</u>                                    | <u>479,378</u>                                    |
| <i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>     |               |   |   |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք            |               | -   | -   |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք |               | <u>268,116</u>                                    | <u>479,378</u>                                    |

1-25 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

## ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| Հազար դրամ   | Բաժնետիրական<br>կապիտալ | Կուտակված<br>շահույթ | Ընդամենը  |
|--|-------------------------|----------------------|-----------|
| 2024թ. հունվարի 1-ի դրությամբ                            | 100                     | 521,420              | 521,520   |
| Տարվա շահույթ  | -                       | 479,378              | 479,378   |
| <i>Ընդամենը տարվա համապարփակ<br/>ֆինանսական արդյունք</i> | -                       | 479,378              | 479,378   |
| 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ                         | 100                     | 1,000,798            | 1,000,898 |
| Տարվա շահույթ  | -                       | 268,116              | 268,116   |
| <i>Ընդամենը տարվա համապարփակ<br/>ֆինանսական արդյունք</i> | -                       | 268,116              | 268,116   |
| Շահաբաժիններ   | -                       | (250,000)            | (250,000) |
| <i>Գործարքներ սեփականատերերի հետ</i>                     | -                       | (250,000)            | (250,000) |
| 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ                         | 100                     | 1,018,914            | 1,019,014 |

1-25 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

## ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

|  | 2025թ.<br>դեկտեմբերի<br>31-ի<br>դրությամբ | 2024թ.<br>դեկտեմբերի<br>31-ի<br>դրությամբ |
|--|---|---|
| <i>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</i>   |   |   |
| Տարվա արդյունք   | 268,116                                   | 479,378                                   |
| <i>Ճշգրտումներ</i>   |   |   |
| Մաշվածություն և ամորտիզացիա  | 130,282                                   | 110,711                                   |
| Ֆինանսական ծախս  | 82,734                                    | 9,079                                     |
| Շահութահարկի գծով ծախս   | 57,343                                    | 115,567                                   |
| Փոխարժեքային տարբերությունից օգուտ   | (41,367)                                  | 11,325                                    |
| Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները      | 497,108                                   | 726,060                                   |
| <i>Փոփոխություններ</i>   |   |   |
| Պաշարներում  | (1,023,437)                               | 372,286                                   |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերում   | (365,251)                                 | (279,128)                                 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերում  | 933,230                                   | (814,175)                                 |
| Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր  | 41,650                                    | 5,043                                     |
| Վճարված տոկոս  | (73,719)                                  | (13,042)                                  |
| Վճարված շահութահարկ  | (125,596)                                 | (38,159)                                  |
| Գործառնական գործունեության համար օգտագործված գուտ դրամական հոսքեր                            | (157,665)                                 | (46,158)                                  |
| <i>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</i>  |   |   |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում                                       | (217,903)                                 | (385,171)                                 |
| Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր  | 100,785                                   | -   |
| Փոխառությունների մարում/(տրամադրում), գուտ   | (13,625)                                  | 1,129                                     |
| Ներդրումային գործունեության համար օգտագործված գուտ դրամական հոսքեր                           | (130,743)                                 | (384,042)                                 |
| Ֆինանսավորման գործունեությունից դրամական հոսքեր  |   |   |
| Վարկերի ստացում/(մարումներ), գուտ  | 1,181,596                                 | (27,022)                                  |
| Շահաբաժիններ   | (250,000)                                 | -   |
| Ֆինանսական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) գուտ դրամական հոսքեր | 931,596                                   | (27,022)                                  |
| <i>Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ/(նվազում)</i>                             | 643,188                                   | (457,222)                                 |
| Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների վրա                          | (596)                                     | 1,060                                     |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին   | 133,194                                   | 589,356                                   |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին   | 775,786                                   | 133,194                                   |

1-25 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ-ն (Ընկերություն) հիմնադրվել է 2020թ. դեկտեմբերի 8-ին: Ընկերության միակ բաժնետերն է՝ «Թիմ հոլդինգ» ՓԲ ընկերությունը:

Յոթնամասուն և ավելի էնտոլոգիաստներից և պրոֆեսիոնալներից բաղկացած Ընկերության անձնակազմը կազմավորվել է դեռևս 2008թ.-ին: Կարճ ժամանակահատվածում Ընկերությունը դարձել է էլեկտրատեխնիկական և ցածրահոս համակարգերի և SS սարքավորումների մատակարարմամբ և ինտեգրմամբ զբաղվող խոշոր կազմակերպություն:

2021թ.-ից ի վեր Ընկերությունը զբաղվում է էլեկտրատեխնիկական, ցածրահոս համակարգերի, արևային էներգիայի կայանների կառուցմամբ, իսկ 2023թ.-ից հանդիսանում է Huawei փոխակերպիչների բացառիկ դիստրիբյուտորը Հայաստանում:

2023թ.-ից Ընկերությունը կառուցում և շահագործում է Team Energy-ն՝ էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ցանցը Երևանում և մարզերում:

2024թ.-ին Ընկերությունը հաճախորդներին առաջարկել է ևս մի նոր պրոդուկտ՝ Smart place by Team-ը, որը տների, գրասենյակների և հյուրանոցների ավտոմատացման և կառավարման համար նախատեսված լուծում է:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Ազատության պող. 24/1, Արարկիր 0014, Երևան, Հայաստան:

## 2 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՔԵՐ

### 2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԻ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

### 2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով (բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության) և սկզբնական արժեքի մեթոդով:

### 2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

## 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 19-ում:

## 2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

### Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2025թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2025թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում»* ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)
- *«Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ»* (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)
- *«Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում»* (ՀՀՄՍ 8 փոփոխություններ)
- *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»* (ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)
- *«Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ»* (ՀՀՄՍ 12 փոփոխություն)

Բացառությամբ ՀՀՄՍ 1 փոփոխությունների և ստորև ներկայացված ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ի՝ *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»*, փոփոխությունների, մյուս ստանդարտներ և փոփոխություններ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

### Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

#### ՖՀՄՍ7 *«Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» - Բացահայտումներ*

ՖՀՄՍ 7-ում կատարված խմբագրումը պահանջում է բացահայտել իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող բաժնային գործիքների իրական արժեքով վերաչափումներից այլ համապարփակ եկամուտներ և ծախսերը՝ առանձնացնելով այն մասը որը վերաբերում է ընթացիկ ժամանակաշրջանում ապաճանաչված ակտիվներին:

Նաև պահանջվում է առանձին բացահայտել ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև պարտադիր այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող ֆինանսական ակտիվների գծով պայմանագրային այն պայմանները, որոնց պատճառով կարող են փոփոխվել պայմանագրային հոսքերի գումարները և ժամկետները, և որոնք հանդիսանում են պայմանական դեպքեր և ուղղակի կապված չեն բազային պարտքային համաձայնագրի ռիսկի և արժեքի փոփոխության հետ:

ՖՀՄՄ 7-ի այս փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՄ9 «Ֆինանսական գործիքներ» - Բնությունից կախված էլեկտրաէներգիայի պայմանագրերի Համաձայն կատարված խմբագրման ՀՀՄՄ 9-ի գործողության ոլորտում կարող են ներառվել բնական երևույթներից կախված և դրանց շնորհիվ արտադրված էլեկտրաէներգիայի (օրինակ հողմային էլեկտրակայանների կողմից արտադրված) ձեռքբերման կամ վաճառքի ածանցյալ պայմանագրերը, եթե ձեռքբերողը պարտավոր է հետ վաճառել էլեկտրաէներգիայի այն ծավալը, որը չի կարող օգտագործել:

Նաև թույլատրվում է էլեկտրակայանին նման պայմանագրերը դասակարգել որպես հեջավորման գործիք, եթե հեջավորված հոդվածը ածանցյալ պայմանագրին համահունչ պայմաններով սպասվող իրացումն է:

ՖՀՄՄ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՄ9 «Ֆինանսական գործիքներ» - Վարձակալության գծով պարտավորությունների ապաճանաչում

ՖՀՄՄ 9-ում կատարված լրացմամբ հստակեցում է որ ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման պահին հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը շահույթում կամ վնասում ճանաչելու պահանջը պետք է կիրառել նաև վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ:

ՖՀՄՄ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՄ9 «Ֆինանսական գործիքներ» - Էլեկտրոնային վճարային համակարգով մարված

ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Համաձայն ՖՀՄՄ 9-ում կատարված խմբագրման էլեկտրոնային վճարման համակարգի միջոցով ֆինանսական պարտավորությունների մարման դեպքում պարտավորությունը կարող է ապաճանաչվել վճարումը կատարելու պահին, եթե կազմակերպությունը չի կարող չեղարկել, կանգնեցնել կամ հետ կանչել վճարումը, օգտագործել այդ միջոցները և վճարման համակարգի հետ կապված ռիսկը աննշան է:

ՖՀՄՄ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՄ9 «Ֆինանսական գործիքներ» - Պայմանական հատկանիշով ֆինանսական ակտիվների -

հոսքերը որպես բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ

Համաձայն ՖՀՄՄ 9-ում կատարված խմբագրման ֆինանսական ակտիվի գծով բավարարված է հոսքերը որպես բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ համարվելու պայմանը, եթե ակտիվի հոսքերը պայմանական են (օրինակ կախված են արտանետված ջերմոցային գազերի ծավալից), պայմանագրային հոսքերը վերանայումից առաջ և հետո համապատասխանում են բազային վարկային համաձայնագրի բնութագրերին, ինչպես նաև հոսքերի վերանայումը կապակցված է բազային վարկային ռիսկին

կամ վերանայված հոսքերը նշանակալիորեն չեն տարբերվում շուկայում համանման ֆինանսական ակտիվի հոսքերից:

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» - Վերահաշվարկումը գերադաճային տնտեսության արժույթով

ՀՀՄՍ 21-ում կատարված խմբագրման համաձայն, եթե ներկայացման արժույթը գերադաճային տնտեսության արժույթ է, իսկ ֆունկցիոնալ արժույթը ոչ, ապա ֆինանսական հաշվետվությունները (արտերկրյա ստորաբաժանման արդյունքները և ֆինանսական վիճակը)՝ ներառյալ համադրելի ցուցանիշները, պետք է վերահաշվարկվեն ներկայացվող ամենավերջին հաշվետու ժամանակաշրջանի փակման փոխարժեքով:

ՀՀՄՍ 21-ի այս փոփոխությունը ուժի մեջ են մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ18 «Ֆինանսական հաշվետվություններում ներկայացումը և բացահայտումը», Փոփոխություններ ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական հոսքերի մասին» հաշվապահական ստանդարտում

2024թ.-ին թողարկվել է ՖՀՄՍ 18 հաշվապահական ստանդարտը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվությունների ներկայացմանը և փոխարինում է «ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ՀՀՄՍ 1-ին:

Նշանակալի փոփոխության է ենթարկվել ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության (նախկին շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը) բովանդակությունը, որտեղ պահանջվում է ներկայացնել եկամուտներն ու ծախսերը ըստ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ և ընդհատված գործառնություններ բաժինների:

ՖՀՄՍ 18-ի կիրառմամբ դրամական հոսքերի մասին հաշվետվությունում չի թույլատրվում տոկոսների և շահաբաժինների գծով հոսքերը դասակարգել որպես գործառնական հոսքեր: Նաև դրամական հոսքերի մասին հաշվետվությունը անողղակի մեթոդով պատրաստելիս սկզբնական ցուցանիշ է համարվում գործառնական գործունեությունից շահույթը կամ վնասը:

ՖՀՄՍ 18-ը և ՀՀՄՍ 7-ի համապատասխան փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ19 «Հանրային հաշվետվողականություն չունեցող դուստր ընկերություններ. բացահայտումներ»

2024թ.-ին թողարկվել է ՖՀՄՍ 19 հաշվապահական ստանդարտը, որը հնարավորություն է տալիս հանրային հաշվետվողականություն չունեցող կազմակերպությունների, որոնք նաև հանդիսանում են ՖՀՄՍ-ների համապատասխան հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող կազմակերպության դուստր ընկերություն, ներկայացնել ավելի պակաս բացահայտումներ քան պահանջվում են այլ ՖՀՄՍ-ներով:

ՖՀՄՍ 19-ի կիրառումը պարտադիր չէ և նշված պայմաններին բավարարող կազմակերպությունը կարող է այն կիրառել մեկ հաշվետու ժամանակաշրջանում և հրաժարվել դրա կիրառումից մեկ այլ ժամանակաշրջանում:

ՖՀՄՍ 19-ը ուժի մեջ են մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

### 3 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

#### 3.1 Արտարժույթ

##### *Արտարժույթով գործարքներ*

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը, 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 381.36 ՀՀ դրամ, 1 եվրոն կազմում էր 449.01 դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 ՀՀ դրամ, 1 եվրոն կազմում էր 413.89 դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

#### 3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերման գինը, ներառյալ ներմուծման տուրքերը և չվերադարձվող գնման հարկերը և այլ ուղղակիորեն վերագրելի ծախսերը: Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Արտադրական, վարձակալության կամ վարչական նպատակներով կամ դեռևս չորոշված նպատակներով շինարարության ընթացքում գտնվող գույքը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած ճանաչված արժեզրկման կորուստը: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսերը, տեղանքի նախապատրաստման, տեղադրման և հավաքման ծախսերը, մասնագիտական վարձատրությունը, իսկ որակավորվող ակտիվների համար՝ փոխառության ծախսերը, որոնք կապիտալացվել են Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Վարձակալության ենթակա շենքերը նույնպես ներառվում են հիմնական միջոցների մեջ, եթե դրանք պահվում են ֆինանսական վարձակալության պայմանագրով: Նման ակտիվները ամորտիզացվում են իրենց սպասվող օգտակար ծառայության ընթացքում (որոշվում է համեմատելի սեփականության ակտիվների հիման վրա) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե այն ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրվող բաղադրիչի հաշվեկշռային արժեքով: Հետագա այլ ծախսումները կապիտալացվում են, եթե այդ ծախսումներից ապագա տնտեսական օգուտներ են ստացվելու: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ վերանորոգման և սպասարկման ծախսերը, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածությունը սկսվում է, երբ ակտիվները հասանելի են օգտագործման համար:

### 3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Շնչառության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում, որը հաշվապահական հաշվառման ծրագրերի ապահովման համար կազմում է 10 տարի:

### 3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ակտիվները չեն ենթարկվում ամորտիզացիայի և տարեկան ստուգվում են արժեզրկման համար: Ամորտիզացիայի ենթակա ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները կամ հանգամանքների փոփոխությունները ցույց են տալիս, որ հաշվեկշռային արժեքը չի կարող վերականգնվել: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է այն գումարի համար, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա վերականգնելի գումարը:

Վերականգնելի գումարը գուտ վաճառքի գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամական միջոց ստեղծող միավորի վերականգնելի գումարը գնահատվում է պակաս դրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամական միջոց միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա վերականգնելի գումարը: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են որպես ծախս անմիջապես, եթե համապատասխան ակտիվը չի հաշվառվում վերագնահատված գումարով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատման նվազում:

Երբ արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի կամ դրամական միջոց ստեղծող միավորի հաշվեկշռային արժեքը մեծացվում է մինչև դրա վերականգնելի գումարի վերանայված չափը, բայց այնպես, որ ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվել էր, եթե նախորդ տարիներին ակտիվի կամ դրամական միջոց ստեղծող միավորի համար ճանաչված արժեզրկումից կորուստ չճանաչվել: Արժեզրկումից կորուստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, եթե համապատասխան ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատման աճ:

### 3.5 Պաշարներ

Պաշարները ակտիվներ են, որոնք պահվում են վաճառքի համար սովորական գործունեության ընթացքում կամ նյութերի կամ պարագաների տեսքով՝ արտադրության գործընթացում կամ ծառայությունների մատուցման ժամանակ սպառվելու նպատակով: Պաշարներ են ճանաչվում նաև այնպիսի իրեր, ինչպիսիք են պահեստամասերը, պահեստային սարքավորումները և սպասարկման սարքավորումները, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքից և գուտ իրացման արժեքից նվազագույնով: Ջուտ իրացման արժեքը սովորական գործունեության ընթացքում գնահատված վաճառքի գինն է՝ հանած ավարտման և իրացման գնահատված ծախսերը: Պաշարների արժեքը հիմնված է «առաջինը մուտք՝ առաջինը ելք» սկզբունքի վրա և ներառում է պաշարների ձեռքբերման և դրանց առկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված ծախսերը:

### 3.6 Ֆինանսական գործիքներ

#### *Ճանաչում և ապաճանաչում*

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

#### *Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը*

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները (կիրառելի դեպքերում), բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեգրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 20-ում:

#### *Ֆինանսական ակտիվների հետագա չափումը*

##### *Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և դասակարգված չեն որպես իրական արժեքով չափվող շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ գեղջման ազդեցությունն աննշան է, գեղջում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են

դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

#### ***Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր***

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ընկերությունը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

#### ***Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ***

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

#### ***Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը***

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունների ամփոփումը ըստ կատեգորիաների ներկայացված է 20-րդ ծանոթագրությունում:

#### ***Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր***

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ձանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

### **3.7 Սեփական կապիտալ**

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նումինալ արժեքը:

Կուտակված շահույթը/(վնասը) ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը/(վնասը):

Սեփականատերերի հետ բոլոր գործարքներն առանձին գրանցվում են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ձանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, որում դրանք հայտարարվում են:

### **3.8 Հատուցումներ աշխատակիցներին**

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո

տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

### ***Պարգևավճարներ***

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

## **3.9 Հասույթ**

Հասույթը ճանաչվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրային զեղչեր:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

- 1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- 2 Բացահայտել կատարման պարտականությունները
- 3 Որոշել գործարքի գինը
- 4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- 5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

#### 4 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

| Հազար դրամ                       | Մեքենաներ և սարքավորումներ | Տրանսպորտային միջոցներ | Արտադրատն տեսական գույք | Այլ     | Կառուցվածքներ | Ընդամենը  |
|----------------------------------|----------------------------|------------------------|-------------------------|---------|---------------|-----------|
| <i>Սկզբնական արժեք</i>           |                            |                        |                         |         |               |           |
| 2024թ. հունվարի 1-ի դրությամբ    | 442,894                    | 27,310                 | 2,563                   | 28,774  | 61,696        | 563,237   |
| Ավելացում                        | 296,381                    | 8,390                  | 2,688                   | 30,819  | 64,001        | 402,279   |
| Օտարում                          | (42,378)                   | -                      | -                       | (9,347) | (263)         | (51,988)  |
